ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-Սուբ-14/02

ք. Երևան «_30_» «_հունվարի_» 2014թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Է.Փիրումյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրեն **Ս.Ասլիկյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1414-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Թափոնների ուսումնասիրության ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 03, դաս 01, ծրագիր 01 (թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքում, վերլուծություն և տրամադրում, թափոնների գործածության ոլորտին վերաբերող նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակում, վերլուծական և լուսաբանական միջոցառումներ) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **14 114 900 (տասնչորս միլիոն հարյուր տասնչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

4.2. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (հավելված 3) հիման վրա:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2014 թվականի հունվարի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Չարենցի 46
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայխնայբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007706	ՀՀ 160481005173
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 01554151
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Է.Փիրումյան	Ա.Ասլանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.

Հավելված № 1
« 30 » « հունվարի » 2014թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-Սուբ-14/02 պայմանագրի

Պետական մարմին
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007706
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար

Է.Փիրումյան

(ստորագրություն)
L.S.

Կազմակերպություն
«Թափոնների ուսումնասիրության կենտրոն»
ՊՈԱԿ
ք.Երևան, Չարենցի 46
«Հայխնայբանկ» ՓԲԸ

ՀՀ 160481005173
ՀՎՀՀ 01554151
«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Ա.Սարգսյան

(ստորագրություն)
L.S.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Թափոնների ուսումնասիրության ծառայություններ» ծրագրի իրականացման

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1.	Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին աջակցություն	ՀՀ տարածքում 2013թ. առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում, վերլուծություն	Կազմակերպություններում առաջացած թափոնների հաշվառում, դասակարգում՝ ըստ վտանգավորության աստիճանի և տնտեսության ճյուղերի ու սպասարկման ոլորտի	Հաշվետվություններ	30.09.2014թ.	1 440 000
2.	Ռեեստրների ստեղծմանն աջակցություն	Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծմանն աջակցություն	1. Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ուսումնասիրում, 2. թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրում, 3. Թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման, օգտահանման, և	1.Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների վերաբերյալ հաշվետվություններ, 2. թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ	30.12.2014թ.	3 300 000

			վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքում	հաշվետվություններ, 3. տեխնոլոգիաներ		
3.	Անալիտիկ լաբորատորիայում հետազոտությունների իրականացում	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով, լաբորատոր հետազոտությունների իրականացում	Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների որոշում	Անալիտիկ հետազոտություններ	30.12.2014թ.	4 800 000
4.	Թափոնների տարանջատ հավաքման և տեսակավորման միջազգային փորձի ուսումնասիրում	Թափոնների տարանջատ հավաքման և տեսակավորման եղանակների ու մեթոդների ուսումնասիրում	Թափոնների տարանջատ հավաքման և տեսակավորման միջազգային փորձի ուսումնասիրում՝ ՀՀ-ում ներդնելու նպատակով	Մեթոդներ	30.12.2014թ.	500 000
5.	Երկրորդային հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային փորձի ուսումնասիրում	Երկրորդային հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման եղանակների ու մեթոդների ուսումնասիրում	Երկրորդային հումքի (թուղթ, պոլիէթիլեն և այլն) վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային փորձի ուսումնասիրում՝ ՀՀ-ում ներդնելու նպատակով	Մեթոդներ	30.12.2014թ.	1 500 000
6.	Վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրում	- «Սնդիկ պարունակող թափոնների գործածությանը ներկայացվող պահանջներ» - «Կապար պարունակող թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջներ» - «Էլեկտրոնային թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջներ» մեթոդական ցուցումների մշակում	Սնդիկ, կապար պարունակող թափոնների, էլեկտրոնային թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրում/ հեռացման մեթոդների ուսումնասիրում	Մեթոդական ցուցումներ	30.12.2014թ.	2 574 900
ԸՆԴԱՄԵՆԸ						**14 114 900**

Հավելված № 2
« 30 » « հունվարի » 2014թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-Սուբ-14/02 պայմանագրի

Պետական մարմին
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007706
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Է.Փիրումյան
(ստորագրություն)
L.S.

Կազմակերպություն
«Թափոնների ուսումնասիրության կենտրոն»
ՊՈԱԿ
ք.Երևան, Չարենցի 46
«Հայխնայբանկ» ՓԲԸ
ՀՀ 160481005173
ՀՎՀՀ 01554151
«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Ս.Ստեփանյան
(ստորագրություն)
L.S.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը **Թափոնների ուսումնասիրության ծառայություններ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1025	ԱԾ 01	Նկարագրություն Թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքում, վերլուծություն և տրամադրում, թափոնների գործածության ոլորտին վերաբերող նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակում, վերլուծական և լուսաբանական աշխատանքներ								
Չափորոշիչներ			Ի եռամսյակ	Ի կիսամյակ	9 ամիս	Տարի	Ի եռամսյակ	Ի կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		Ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն, առաջացած թափոնների հաշվառում և դասակարգում; դրանց հիման վրա հաշվետվությունների կազմում, կազմակերպությունների թիվը			800	800				
Որակական		Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցության նպատակով ՀՀ տարածքում 2013թ. առաջացած թափոնների վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում, վերլուծություն: Կազմակերպություններում առաջացած թափոնների հաշվառում, դասակարգում՝ ըստ վտանգավորության աստիճանի և տնտեսության ճյուղերի ու սպասարկման ոլորտի								

Ժամկետայնության	Աշխատանքների կատարման ժամկետը			Մինչև ընթացիկ տարվա 3-րդ եռամսյակի ավարտը					
Քանակական	Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների թիվը	6	13	21	30				
	Թափոնների հեռացման վայրերի թիվը	3	7	10	15				
	Թափոնների օգտահանման, վնասազերծման վերաբերյալ առաջարկվող տեխնոլոգիաների թիվը	8	18	28	40				
Որակական	Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցություն.Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ուսումնասիրում, թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրում, թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման, օգտահանման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքում								
Ժամկետայնության	Աշխատանքների կատարման ժամկետը				Մինչև ընթացիկ տարվա 4-րդ եռամսյակի ավարտը				
Քանակական	Անալիտիկ հետազոտությունների թիվը	48	108	168	240				
Որակական	Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների որոշում								
Ժամկետայնության	Աշխատանքների կատարման ժամկետը				Մինչև ընթացիկ տարվա 4-րդ եռամսյակի ավարտը				
Քանակական	Տեղեկատվական աղբյուրների թիվը	2	5	7	10				
Որակական	Թափոնների տարանջատ հավաքման և տեսակավորման եղանակների ու մեթոդների ուսումնասիրում								
Քանակական	Տեղեկատվական աղբյուրների թիվը	5	11	17	25				
Որակական	Երկրորդային հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման եղանակների ուսումնասիրում								
Քանակական	Մշակվող փաստաթղթի քանակը				1				
Որակական	«Սնդիկ պարունակող թափոնների գործածությանը ներկայացվող պահանջներ» մեթոդական ցուցումների մշակում								
Քանակական	Մշակվող փաստաթղթի քանակը				1				
Որակական	«Կապար պարունակող թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջներ» մեթոդական ցուցումների մշակում								
Քանակական	Մշակվող փաստաթղթի քանակը				1				

Որակական	«Էլեկտրոնային թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջներ» մեթոդական ցուցումների մշակում								
Ժամկետայնության	Աշխատանքների կատարման ժամկետը				Ընթացիկ տարվա 1-4 եռամսյակ				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	2358.4	5306.4	9183.6	14114.9

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1025 Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովող պայմանների սահմանում

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության ապահովում, մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանում՝ դրանց վնասակար ազդեցությունից

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ

Հավելված № 3
« 30 » « հունվարի » 2014թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-Սուբ-14/02 պայմանագրի

Պետական մարմին

ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք
ՀՀ 900011007706
ՀՎՀՀ 02507198

Կազմակերպություն

«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Չարենցի 46
«Հայխնայբանկ» ՓԲԸ
ՀՀ 160481005173
ՀՎՀՀ 01554151

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____ » 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ Սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2014թ.

Պայմանագրի համարը՝ № ՀՀ-ԲՆ-Սուբ 14/02

*Պետական մարմինը՝ ի դեմս **ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Է.Փիրումյանի,** և Կազմակերպությունը՝ ի դեմս **«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ս.Ասլիկյանի,** կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.*

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը «___» «_____» 2014թ.-ից «___» «_____» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը մեկ միավորի հաշվարկով (դրամ)*	*Մեկ միավորի գինը (դրամ)*	*Մեկ միավորի համար տրամադրվող սուբսիդիայի չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը՝ ամիս ամսաթիվ*
1	2	3	4	5=3-4	6=2x5	7
Ընդամենը						

ԸՆԴՈՒՆԵՑ

_____
(ստորագրություն)

ազգանուն _____

Կ. Տ.

ՀԱՆՁՆԵՑ

_____
(ստորագրություն)

ազգանուն _____

Կ. Տ.